ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1950 Общественные науки

ԲԵՌԼԻՆԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 250-ԱՄՅԱԿԸ

1950 թվի հուլիսի 11-ին Գերմանական Դեմոկրատական ռեսպուբլիկայի ամբողջ պրոգրեսիվ հասարակայնությունը հանդիսավոր կերպով նշեց Բեռլինի Գերմանական Գիտությունների Ակադեմիայի 250-ամյա հոբելյանը։ Գերմանական Գիտությունների Ակադեմիան, որը հիմնվել է այն ժամանակվա խոշորագույն գիտնականներից մեկի՝ Գոդֆրիդ Վիլհելմ Լեյբնիցի նախաձեռնությամբ 1700 թվին, իր գործունեության երկար տարիների ընթացքում մեծ ավանդ է մտցրել գերմանական և համաշխարհային կուլտուրայի զարգացման մեջ։ Գիտությունների Ակադեմիան պաշտոնապես բացվել է 1711 թվին։ Նրա առաջին պրեզիդենտը եղել է Լեյբնիցը։

Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի և Գերմանական Գիտությունների Ակադեմիայի միջև վաղուց են սահմանված եղել գիտական սերտ կապեր, որոնք արտահայտվում էին գիտական հրատարակչությունների փոխանակությամբ, ինչպես և զանազան խնդիրների համատեղ լուծմամբ, փոխադարձ մրցանակների սահմանմամբ։

Ռուսական Գիտությունների Ակադեմիայում 30 տարուց ավելի աշխատել է հայտնի գիտնական Լեոնարդ Էյլերը։ Այնտեղ նա ստեղծել է իր լավագույն աշխատանքները, որոնք արժանացրել են նրան մեծ մաթեմատիկոսի փառքին։

Լեոնարդ Էյլերը երկու Ակադեմիաների անդամ է եղել և երկար ժամանակ (շուրջ 29 տարի) աշխատել է նաև Գերմանական Գիտությունների Ակադեմիայում։

1747 թվին ակադեմիկոս Մ. Վ. Լոմոնոսովը, Լեոնարդ Էյլերի առաջարկությամբ, մասնակցել է սելիտրայի ծագմանը վերաբերող խնդրի լուծման կոնկուրսին, որը կազմակերպել էր Գերմանական Գիտությունների Ակադեմիան։ Ակադեմիկոս Մ. Վ. Լոմոնոսովի մրցանակի ներկայացված „Dissertatio de generatione et natura nitri" աշխատանքը մինչև այժմ էլ պահպանվում է Գերմանական Գիտությունների Ակադեմիայի արխիվում։

Գերմանական մեծ բանաստեղծ և գիտնական անմահ «Էդմոնտի» և «Ֆաուստի» ստեղծող Վոլֆգանգ Գյոթեն 1826 թվին մասնակցություն է ունեցել Ռուսական Գիտությունների Ակադեմիայի կողմից առաջարկված՝ լույսի բնույթի պարզաբանման խնդրին։

Ռուս մեծ գիտնականներ, քիմիական տարրերի պարբերական սիստեմի հեղինակ Դ. Ի. Մենդելեևը, մաթեմատիկոս Պ. Լ. Չեբիշևը, երկրաբան, կրիստալոգրաֆ Ն. Ի. Կոշկարովը և աշխարհագրական ընկերության հիմնադիրներից մեկը՝ բիոլոգ, անտրոպոլոգ և աշխարհագրագետ Կ. Մ. Բերը և ուրիշ շատերը Գերմանական Գիտությունների Ակադեմիայի անդամներ են եղել։ Մյուս կողմից էլ Ռուսական Գիտությունների Ակադեմիան իր կազմում՝ որպես թղթակից անդամներ ընտրելով համաշխարհային խոշորագույն գիտնա-

կաններին, այդ պատվին շատ անդամ է արժանացրել գերմանական գիտնականներին, դրանց թվում և Գերմանական Գիտությունների Ակադեմիայի անդամներին։

Ռուսական Գիտությունների Ակադեմիայի պատվավոր անդամների թվում եղել են փիլիսոփա Քրիստիան Վոլֆը, մաթեմատիկոս Յոհան Բերնուլլին, փիլիսոփա Էմմանուել Կանտը, ֆիլոլոգ Վիլհելմ Գումբոլտը, կենդանաբան և բուսաբան Ալեքսանդր Գումբոլտը, աստղաբաշխ, մաթեմատիկոս և ֆիզիկոս Կարլ Գաուսը և Վոլֆգանգ Գյոթեն։ Թղթակից անդամներ են ընտրվել ֆիզիկոս-մաթեմատիկոս Գերգ-Սիմոն Օմը, ֆիլոլոգ Յակով Գրիմը, քիմիկոս Ռոբերտ Բունզենը, ֆիլոլոգ Հերման Հելմհոլցը։

Պրուսական միապետության մռայլ շրջանում Գերմանական Գիտությունների Ակադեմիան դարձավ մի ռեակցիոն գիտական հիմնարկություն, որը քարոզում էր գիտության «ավտոնոմիա» և «ապաքաղաքականություն», միաժամանակ պաշտպանում էր միապետության և ունևորների շահերը։ Ֆաշիզմի իշխանության գլուխ անցնելուց հետո ակադեմիան դարձավ հիտլերյան ռազմական մեքենայի մի հասարակ կցորդ։ Հալածանք սկսվեց այն ամենի դեմ, ինչ որ պրոգրեսիվ էր, ինչ որ դեռ մնացել էր գիտա-հետազոտական ինստիտուտներում, լաբորատորիաներում և Ակադեմիայի հանձնաժողովներում։

Շատ գիտնականներ հարկադրված եղան թողնել երկիրը, ազատվել ֆաշիստական ատելի ռեժիմի հետապնդումից ու ապաստան գտնել հայրենիքից հեռու։ Ոմանք էլ սկսեցին ակտիվորեն աշխատակցել հիտլերյան ռեժիմի հետ, օգնելով նրան պատրաստելու պատերազմի մահաբեր զենքեր, կրելով իրենց վրա խայտառակության անջնջելի դրոշմը։

Սրանից հինգ տարի առաջ բոլշևիկների պարտիայի, սիրելի առաջնորդ, ուսուցիչ և զորավար ընկեր Ստալինի շուրջը համախմբված սովետական ժողովրդի հերոսական ջանքերի շնորհիվ համաշխարհային-պատմական հաղթություն ձեռք բերվեց ֆաշիզմի սև ուժերի դեմ։ Դա սովետական հասարակական և պետական կառուցվածքի հաղթանակն էր, կառուցվածք՝ որ իրականում ապացուցեց իր հզորությունն ու անհաղթելի կենսունակությունը։

Սովետական Բանակը կատարելով իր մեծ ազատագրական միսիան, փրկեց Եվրոպայի ժողովուրդները ֆաշիստական ստրկությունից, փրկեց համաշխարհային քաղաքակրթությունը, ազատագրեց գերմանական ժողովրդին ֆաշիստական ճնշումից։ Պոտսդամի համաձայնագրի պայմանները նախատեսնում էին գերմանական ժողովրդին հնարավորություն տալ վերականգնելու իր կյանքը դեմոկրատական հիմունքներով։

Սովետական Միության խաղաղասեր քաղաքականությունը, սակայն, դիմադրության հանդիպեց իրենց ագրեսիվ նպատակներին հետապնդող պատերազմի անգլո-ամերիկյան հրձիգների կողմից։ Խախտելով Պոտսդամի համաձայնագիրը, անգլո-ամերիկյան իմպերիալիստները կանգնեցին Գերմանիայի պառակտման ուղու վրա, Արևմտյան Գերմանիայի վզին փաթաթեցին օկուպացիոն ստատուտ, որը դարձրեց նրան կիսագաղութ։ Ստեղծեցին այնտեղ մարիոնետային «Բոնի կառավարությունը»։ Արևմտյան Գերմանիան գնալով ավելի ու ավելի է ագրեսիայի բազա դառնում Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատիայի երկրների դեմ։

Ը հակադրություն անգլո-ամերիկյան իմպերիալիստների ոտնձգություն-

ների՝ սովետական կառավարությունը կատարելով Պոտսդամի որոշումները, պաշտպանեց Գերմանիան միասնական խաղաղասեր պետություն դարձնելու գաղափարը։ Սովետական կառավարության հետևողական ստալինյան արտաքին քաղաքականության շնորհիվ զարթնեցին և աճեցին գերմանական ժողովրդի դեմոկրատական ուժերը, որոնք բանվոր դասակարգի ղեկավարությամբ, Գերմանիայի միասնական սոցիալիստական պարտիայի գլխավորությամբ 1949 թվի հոկտեմբերի 7-ին ստեղծեցին Գերմանական Դեմոկրատական ռեսպուբլիկան։

Կարճ ժամանակամիջոցում երիտասարդ Գերմանական Դեմոկրատական ռեսպուբլիկան տնտեսական և քաղաքական զգալի հաջողությունների հասավ, մի բան, որ ակնառու կերպով ցույց է տալիս գերմանական ժողովրդին՝ դեմոկրատական հասարակակարգի առավելությունը։

Գերմանական Դեմոկրատական ռեսպուբլիկայի պրեմյեր-մինիստր Օտտո Գրոտեվոլը ռեսպուբլիկայի ժամանակավոր պալատի 1950 թ. մարտի 22-ի 13-րդ պլենար նիստում նշեց, որ տնտեսական և քաղաքական լայն վերականգնման հետ միաժամանակ Գերմանիայում սկսվել է «նոր դեմոկրատական կուլտուրայի ստեղծումը, կուլտուրա՝ որ ծառայում է խաղաղության և պրոգրեսի գործին»։

Ռեսպուբլիկայի հաջողության ցուցանիշներից մեկն է գերմանական դեմոկրատական ռեսպուբլիկայի՝ 1950 թ. մարտի 16-ի որոշումը՝ գերմանական ժողովրդի պրոգրեսիվ դեմոկրատական գիտության և կուլտուրայի՝ ինչպես և ինտելիգենցիայի կյանքի պայմանների հետագա բարելավման մասին։ Այդ որոշման մեջ նշվում է, որ Գերմանիան ոտք է դրել գիտությունն ու արվեստը խաղաղասեր դեմոկրատական ռեսպուբլիկային ծառայեցնելու ուղու վրա, և որ առաջին անգամ գիտության ու կուլտուրայի նվաճումները գերմանական ժողովրդի սեփականությունն են դառնում։ Որոշման մեջ մատնանշվում է, որ կառավարությունը գիտակցելով գիտության վիթխարի նշանակությունը դեմոկրատական պետության զարգացման համար, ձեռք կառնի բոլոր միջոցները երկրի գիտության և գիտական հետազոտությունների զարգացման ու բարգավաճման համար։ Նոր ձևով է դրվում ինտելիգենցիայի՝ երկրի հասարակական կյանքում ունենալիք դերի հետագա ուժեղացման խնդիրը։

Նոր Գերմանիայի կառավարությունը գլխավոր խնդիրներից մեկն է համարում գիտության դեմոկրատացումը։ Այդ նպատակով համալսարաններին կից ստեղծված են բանվորա-գյուղացիական ֆակուլտետներ, որոնցում 1949 թվին ընդունվել են 3200 պատանիներ և աղջիկներ։

Դեմոկրատական դպրոցների ստեղծմամբ և Սովետական Միության անշահախնդիր օգնությամբ հաղթահարվեց ֆաշիզմի թողած սարսափելի ժառանգությունը նախադպրոցական և դպրոցական կրթության բնագավառում։

Դեմոկրատական ռեսպուբլիկայի կառավարությունը սահմանել է ազգային մրցանակ գիտության և տեխնիկայի բնագավառում աչքի ընկնող նվաճումների, արտադրության մեջ ժողովրդա-տնտեսական նշանակություն ունեցող նոր մեթոդներ ներդնելու, և գրականության ու արվեստի բնագավառի աշխատանքների համար։

Ազգային մրցանակները պետք է հատկացվեն ամեն տարի, Գերմանական Դեմոկրատական ռեսպուբլիկայի գոյացման տարեդարձին՝ Հոկտեմբերի 7-ին։

Գերմանիայի ժամանակավոր ժողովրդական պալատը նույնպես օրենք է

ընդունել վաստակավոր ժողովրդական ուսուցիչներին և բժիշկներին պատվավոր կոչումներ տալու վերաբերյալ։

Գերմանական Դեմոկրատական ռեսպուբլիկայի կառավարությունը ահագին օգնություն է ցույց տալիս Բեռլինի Գիտությունների Ակադեմիային։

Գերմանական կառավարությունը զգալի միջոցներ է հատկացրել գիտահետազոտական աշխատանքների լայնացման, գիտական կադրերի պատրաստման, ինստիտուտների և լաբորատորիաների շինարարության համար։

Նախատեսվում է Ակադեմիայի շենքի շինարարությունը։ Պլանավորված է երկաթի ու պողպատի, գունավոր մետաղների, զոդման, էներգետիկ և այլ նոր գիտահետազոտական ինստիտուտների կառուցումը։

Այդ միջոցառումների հետևանքով Գերմանական Գիտությունների Ակադեմիան ի վիճակի կլինի բավականաչափ ընդարձակելու իր հետազոտական գործունեությունը առավել կայուն հիմքերի վրա։ Ակադեմիան ձեռնամուխ է եղել գիտա-հետազոտական աշխատանքների հնգամյա պլանի մշակմանը, որի կենսագործումը պետք է սկսվի 1951 թ. հունվարին։

Մինչև վերջին ժամանակներս Գերմանական Գիտությունների Ակադեմիան մեծ ուշադրություն է հատկացրել Գերմանիայի, Հունաստանի և Հռոմի անոյալի պատմության գիտական ուսումնասիրությանը, միջնադարի լատինական բառարանների և գերմաներեն տեքստերի հրատարակմանը, ինչպես և հունական բժիշկների տեքստերի մշակմանն ու հրատարակմանը և այլն, իսկ երիտասարդ Գերմանական Դեմոկրատական ռեսպուբլիկայի շինարարության հետ կապված չափազանց կարևոր ու գործնական, ժողովրդա-տնտեսական պրոբլեմների մշակումը Ակադեմիան դեռևս ի վիճակի չեղավ հարկ եղած չափով ծավալել, ամենից առաջ համապատասխան գիտական կադրերի պակասության պատճառով։

Գիտությունների Ակադեմիային կից կազմակերպված է ասպիրանտական խմբակ, Ակադեմիայի ֆիլիալների, բարձրագույն տեխնիկական դպրոցների և համալսարանների համար գիտահետազոտական և դասախոսական կադրեր պատրաստելու նպատակով։

Վերածնված Գերմանական Գիտությունների Ակադեմիան անսահման հնարավորություններ ունի, որպեսզի ծառայի Գերմանիայի վերականգնման և վերափոխման գործին, գիտության և կուլտուրայի զարգացմանը, ինչպես նաև զարգացող արդյունաբերության և գյուղատնտեսության հիմնական պրակտիկ խնդիրներին։

Գերմանական Գիտությունների Ակադեմիան բաժանվում է վեց բաժինների. ֆիզիկո-մաթեմատիկական և բնական գիտությունների, լեզվի, գրականության ու արվեստի, հասարակական գիտությունների, բժշկական գիտությունների, գյուղատնտեսական և տեխնիկական գիտությունների։

Ակադեմիայի աշխատանքները ղեկավարում է ընդհանուր ժողովը, որի կազմի մեջ են մտնում իրենց բնագավառում դիտական խոշոր մասնագետներ հանդիսացող իսկական անդամները։ Ներկայումս գերմանական գիտությունների Ակադեմիայում կա 97 իսկական անդամ, 120 ազատ տեղերի առկայությամբ։

Բեռլինի Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտը հայտնի ֆիլոլոգ ու պատմաբան, պրոֆեսոր դոկտոր Իոհաննես Շտրուկսն է, վիցե պրեզիդենտը՝ պրոֆեսոր դոկտոր Հանս Շտիլլին։

Ակադեմիայի Ընդհանուր ժողովի և նախագահության որոշումների պրակտիկ գործադրումը և նախապատրաստումը ենթակա են Ակադեմիայի դիրեկտոր— պրոֆեսոր դոկտոր Յոզեֆ Նաասի իրավասությանը։

Հետզհետե ամրապնդվում են և ընդարձակվում գերմանական դեմոկրատական գիտության կապերը Սովետական Միության առաջավոր սոցիալիստական գիտության հետ։ 1949 թվի գարնանը ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիային այցելեց Դեմոկրատական Գերմանիայի գիտության գործիչների պատվիրակությունը Ակադեմիայի պրեզիդենտ պրոֆեսոր Իոհաննես Շտրուկսի գլխավորությամբ։ Պատվիրակությունը ծանոթացավ Մոսկվա քաղաքի մի շարք ուսումնական և կուլտուրական հիմնարկների հետ և ընդունվեց ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ ակադեմիկոս Ս. Ի. Վավիլովի և նախագահության անդամների կողմից։ Բարեկամական զրույցի ընթացքում քննության առնվեցին երկու ակադեմիաների միջև եղած գիտական կապերին վերաբերող խնդիրները։

Իր հերթին Գերմանական Գիտությունների Ակադեմիային այցելեցին ակադեմիկոս Ի. Ի. Մեշչանինովը և պրոֆ. Ի. Ի. Անիսիմովը, որոնք մասնակցեցին Վոլֆգանգ Գյոթեի ծննդյան 200-ամյակի հանդեսներին։ Ակադեմիկոս Ա. Ռ. Օպարինը մի շարք դասախոսություններ կարդաց Գերմանիայում սովետական գիտության զարգացման, նրա՝ գործնականի հետ ունեցած անքակտելի կապի մասին, միչուրինյան ամենահաղթ բիոլոգիայի մասին։

Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի գիտության և կուլտուրայի ծաղկման ֆոնի վրա ավելի որոշակի է երևում գիտության և կուլտուրայի անկումը Արևմտյան Գերմանիայում, նկատվում է գիտության գործիչների և կուլտուրայի հարաճուն աղքատացում, տարվում է ագրեսիվ պատերազմի ամերիկյան սանձարձակ պրոպագանդա։ Սպառնալիքի տակ է դրվում խոշորագույն հիմնարկությունների գոյությունը, գիտնականները զրկվում են գիտական աշխատանք վարելու հնարավորությունից։ Այսպես, անցած տարվա դեկտեմբերին Գյոտինգենի համալսարանի ռեկտոր պրոֆեսոր Ռայզերը մի հուշագիր է հրատարակել, որի մեջ խոսվում է այդ հռչակավոր համալսարանի «գոյությանն սպառնացող անմիջական վտանգի» մասին։ Արևմտյան Գերմանիայի հայտնի գիտնականները, դրանց թվում և Նոբելյան մրցանակի լաուրեատներ, Հանը և Հայզենբերգը Մյունխենում հրատարակվող «Ռենյու» ժուռնալի մեջ զետեղել են իրենց «Բնակարանային անտանելի պայմանները», «Թաղված գիտելիքները» և այլ հոդվածները՝ Արևմտյան Գերմանիայում տիրող գիտության անմխիթարական դրության մասին։ Տյուբինգենի համալսարանի պրոֆեսոր Գոտտրոմի հայտարարությամբ Արևմտյան Գերմանիայում երիտասարդ գիտնականները զուրկ են գիտական գործունեության ամեն տեսակ պայմաններից։ Գիտության և կուլտուրայի գործազուրկ աշխատավորների թիվը մշտապես աճում է։ Բազմաթիվ գիտնականներ անցնում են Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի տերիտորիան, որտեղ նրանք գիտական աշխատանք տանելու հնարավորություն են ստանում։

Նմանօրինակ դրություն է նկատվում Արևմտյան Գերմանիայում, արվեստի բնագավառում (թատրոն և երաժշտություն)։ Արևմտյան Գերմանիան և Արևմտյան Բեռլինը հեղեղված են ամերիկյան գանգստերյան ֆիլմերով, որոնք մատակարարվում են որպես հարկադրական ասորտիմենտ՝ Մարշալլի պլանի համաձայն։ Արևմտյան Գերմանիայում ժողովրդական տոներին փոխա-

րինել են ամերիկյան բարբարոս զվարճությունները, ինչպիսիք են մարաթոնյան պարերը, մրցումները մակարոն ուտելու մեջ, պարգևատրումներ ամենահաստ ոտքերի համար, ամենամեծ ճաղատության համար և այլն։

Երկու աշխարհ՝ զարգացման երկու հանրագումար։

Այս պատճառով էլ Գերմանիայի գիտնականների առաջ նոր ձևով են դրվում պայքարի հետագա ծավալման խնդիրները՝ ընդդեմ ամերիկյան ագրեսորների, վերջիններիս Բոնյան գործակալների ու նրանց ապականված կուլտուրայի, հանուն միասնական խաղաղասեր դեմոկրատական Գերմանիայի, հանուն խաղաղության և պրոգրեսի։

Աճում և ընդարձակվում է խաղաղության համար մարտնչողների ֆրոնտը Գերմանիայում։ Գերմանական Գիտությունների Ակադեմիան ակտիվորեն միանում է խաղաղության կողմնակիցների շարժմանը։ Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայում 7 միլիոնից ավելի մարդիկ ստորագրել են խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի մշտական կոմիտեի ստոկհոլմյան սեսիայի կոչը։ Կոչն ստորագրողների մեջ են Գերմանական Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ պրոֆեսոր Իոհաննես Շտրուկսը, Բեռլինի Հումբոլտի անվան համալսարանի ռեկտոր պրոֆեսոր Վալտեր Ֆրիդրիխը, պրոֆեսոր Բրուդշը, Խավեմամը, Արիո Մյուլլերը, գրող Իոհաննես Բեխերը, Բերնհարդ Կելլերմանը, Աննա Զեգերսը և շատ ուրիշները։

1950 թվի հուլիսի 10-ից մինչև 14-ը Գերմանական Գիտությունների Ակադեմիան նշեց իր գոյության 250-ամյա հոբելյանը։ Այդ նշանակալի տարեթիվը ազատ և հանդիսավոր կերպով նշեց ամբողջ գերմանական ժողովուրդը, համոզված լինելով, որ Գերմանական Գիտությունների Ակադեմիան կծառայի ժողովրդի շահերին, ուժեղ և անկախ միասնական, խաղաղասեր, դեմոկրատական Գերմանիա ստեղծելու գործին։

Գերմանական Գիտությունների Ակադեմիայի 250-ամյակի տոնակատարությունը հանդիսանում է գիտնականների և ժողովրդի՝ առավել ամրապնդվող միասնականության արտահայտություն այն պայքարում, որ մղվում է դեմոկրատական գիտության համար՝ նոր Գերմանիայում։

Հոբելյանական հանդեսները ցույց տվեցին, որ Գերմանական Գիտությունների Ակադեմիան, բոլոր երկրների պրոգրեսիվ գիտնականների հետ միասին գտնվում է մեծ Սովետական Միության կողմից գլխավորվող մարտիկների առաջին շարքում, հանուն խաղաղության, հանուն ազատության ու պրոգրեսի, ընդդեմ պատերազմի ամերիկյան հրձիգների։